

ւածով թոցնում է համի զուխը: Նոյնը փորձում են նաև թագավորի երիտասարդ բարեկանները: Այս սովորութիւնը, սակայն, հետհետէ վերանում է: Հաւագլուխից յետոյ քահանան «Թագաւոր գոլով» շարականց երգելով՝ տան գնչից ներս է մտնում, նրան հետեւում են թագավորը, հարսը և խաչնդայրը, ապա հարսնորդները: Թագաւորն ու իսաշնչեայրը զնում, կանգնում են «փարզի» առաջ, իսկ հարսը զնում է իր բաժանումները: Այս միջոցին սառ ու դափն հնչում է աւելի ուժգին և երիտասարդները, շահէլ աղջիկներն ու հարսներն ուրաքանչ տրամադրութեան ներքոյ՝ սկսում են երգել և պարել թագաւորի հայրին խսկոյն մի մարդ է ուղարկում գիւղի տները և բոլոր գիւղականներին ճաշի հրաւիրում: Կարճ միջոցում հաւաքում են և անմիջապէս, նախ տղամարդիկ և ապա կանաք, ապա տեսնան կարգով, իրական և նեղ սփոցներով ժամկաւած յատակի վրայ, միմանց հանդէս, ժաւապատիկ նստում են. քահանան օրնում է սեղանը և բոլորն էլ սկսում են ճաշի: Սովորաբար մասուցանում են եախնի և փաւու ճաշից յետոյ մինչև երեկոյ քէֆ են անում և ապա ցրում:

Այրիի. Եշանադրութիւնն ու պատկադրութիւնը. — Այսի կինը չի վերապառնում հօրանց տունը, այլ մտում է սկեսրանց տանը, իսկ եթէ ցանկանում է կրկին ամուսնանալ՝ զազտնի խօսք է տալիս իր սիրածին և նրանից մի մատանի է վերցնում, որով նշանագրութիւնը կասարած է համարում: Այնուհետև սիրածը պայտօնապէս խնդրում է նույն ձեռքը սկնեսորդից: Համաձայնութիւնն ստանալուց յետոյ, մի որոշակ զիշեր, եկեղեցում կատարում է պատկե, որ մինում է շատ պարզ, առանց սազ ու դափն:

Վիճակնամ
(Հարութակելի)

Արար Երեսնաւ

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՐԱԳԻՒՔ

Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՁԻՆ

(Հար. տես Բազմավէպ, 1924 էջ 302)

Ի՞ն.

ՄԱՐԴԱԿԱՎՅԱՑՄՈՒԹԻՒՆ ԱՊՈԽՄԱՅԼԻԱՅ

Ցոյմարական զրութիւններ պարունակող ձեռագիր մը սկիզբը կը գտնուի այս Մարդակագմարդիւնը, որ անգամ մը նիւթ եղած է ինձ 817 թուահամար Զեռագիրին ուսումնասիրութեանս մէջ:

Այսող ձեռագիրը փայտեայ կողքերով կաշէկազմ լլլալով, հավլւ ունի 10 հարիւրորդամեղը մեծութիւն՝ 8 հարիւրորդամեղը լայնութեամբ և 3, 5 հարիւրորդամեղը թանձրութեամբ, որուն թուահամարն է 276:

Գիրը ամբողջ նոտր է, միասին, թուղթը բամբակեայ, հանգամանըը լւաւ:

Զեռագիրս Պաշպալովէ Ս. Ղազար բերած է Հ. Միքայէլ Վ. Զամշան 1790ին. և նուրած է զյան Պաշպալովցի թովհանէս Զիգիեան անուն անձը, որ 176րդ էջին վրայ անտաշ զրերով կը թիշտառակոթիւնը կ'արձանագրէ այսպէս:

« Յիշտակ է Յովնանեսին ՈՀ, ԱՂ, և Մկրտիչի Զիգիեան, ի վան Որրոյն « Ղազարու որ ի վեճեստիկ ձեռամբ, Հ. « Միքայէլ Վարդապետի Զամշանն. Յամի « Տեսան 1790, Ապրիլի 4-ին ի Պաշ « վարով:

*

Յայտնի չէ թէ նրա և ուր ընդորինակուած է ձեռագիրս. բայց ամենայն հաւանականութեամբ, 18րդ դարու սկիզբներն եղած լլլալով է այն. տեղ մը կը կարգացուի թէ ընդօրինակիչը եղած է ոմն ՅՈՎՆԱՆԻՍ ԳՐԻՉ: զոր շփոթելու չէ համանուն նուրատուուն հետ:

Մարդակազմութիւնը կը զրաւէ ձեռագիրն սկզբնական 58 էջերը՝ 29 թերթերով:

Երբ անձ մը կը տառապի Փիզիական կամ քարյական ցանով՝ դեռ մի տար իրեն օգնութիւն և ոչ ժաշշական խօսք մ'ըսէ. ամէն բանէ առաջ տուր կարեկից հայեացը մը:

Խոր. Մերսուէ